Ճանաչի՛ր ինքդ քեզ

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 11.10.2023թ. չորեքշաբթի թիվ 42 (1119)

Ուսուցչի օրվա առթիվ

## ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի ուղերձը՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ ուսուցիչներ,

Մենք ապրում ենք օրեր, երբ Ուսուցչի տոնը ոչ թե միմյանց ջերմորեն շնորհավորելու եւ բարեմաղթանքներ հղելու առիթ է, այլ ձեր դերն ու առաքելությունը վերաիմաստավորելու, պատասխանատվությունը կրկնապատկելու եւս մեկ անհրաժեշտություն: Վերջին տարիներին դուք ցուցաբերել եք միահամուռ ջանքերով մարտահրավերները հաղթահարելու կամք ու վճռականություն՝ անցնելով համավարակն ու պատերազմը: Այսօր, առավել քան երբեւէ, պետք է բազմապատկել բոլորիս վճռականությունն ու հետեւողականությունը՝ ի նպաստ մեր հայրենազրկված երեխաների կրթության շարունակականության ապահովման:

Սիրելի՛ մանկավարժներ, բոլորիս ուշադրության կենտրոնում այսօր Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցներն են, նրանց ամեն կերպ աջակցելու եւ ինտեգրելու առաջնային գործընթացները: Դուք պետության վստահելի գործընկերն եք, եւ ձեր անմիջական ջանքերով ենք հաղթահարելու այս բարդ ու ճակատագրական փորձությունը: Սիրե՛ք եւ փայփայե՛ք մեր դպրոցականներին, հայրենիքի պատերը թող ձեզնով ավելի ջերմանան նրանց համար: Շնորհակալ եմ այն նվիրվածության եւ սրտացավության համար, որով թե՛ կրթության գործընթացն եք ապահովում, թե՛ հասցնում մասնակցել կամավորական աշխատանքներին ու աջակցել մեր հայրենակիցներին: Այս օրերին ձեր դրսեւորած վարքն ավելին է, քան անցկացրած դասը: Հավատացա՛ծ եղեք՝ ձեր թե՛ նախկին, թե՛ ներկա աշակերտները նորովի են արժեւորել իրենց ուսուցչին ու շատ բան սովորել այս ընթացքում:

Ձեզնից շատերը հենց այս շրջանում մասնակցել եւ մասնակցում են նաեւ կամավոր ատեստավորման գործընթացին: Ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել բարդ իրավիճակում պլանավորած անելիքն իրականացնելու կամքի համար: Վստա՛հ եղեք՝ յուրաքանչյուրիդ որոշումն ու մասնակցությունը նպաստում են պետական բարեփոխումների կայացմանը, որը մեր կրթական համակարգի, հետեւաբար նաեւ պետության զարգացմանն ուղղված կարեւոր քայլ է:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սիրելի՛ ուսուցիչներ, մենք ձեզ սպասում ենք մեր դպրոցներում՝ ամեն կերպ աջակցելու եւ աշխատանքով ապահովելու: Միացե՛ք մեր մեծ թիմին՝ ընդհանուր դժվարություններն ու հաջողությունները կիսելու, միասին այս փորձությունները պատվով անցնելու, մեր երեխաների կրթությունն ավելի որակյալ դարձնելու բարձր նպատակն իրականացնելու ճանապարհին:

Սիրելի՛ ուսուցիչներ, մաղթում եմ ձեզ ուժ ու եռանդ, աշխատելու եւ արարելու կամք եւ լավատեսություն:

«Տարվա լավագույններ»

## Ամփոփվել են մրցույթի արդյունքները



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** հյուրընկալել է 2023 թվականի *«Տարվա լավագույններ»* մրցույթի հաղթող մանկավարժներին:

ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող մրցույթի շրջանակում այս տարի հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում հաղթող է ճանաչվել 12 ծրագիր, հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 4, հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր անվանակարգում՝ 1, նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 4, նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 2 ծրագիր:

***շարունակությունը՝ էջ 3***

Հյուրընկալ Սյունիք

## Կամավորական օրինակելի աշխատանքներ



ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** մեկնել է Սյունիքի մարզ եւ շրջել Գորիսի կրթական եւ մշակութային մի քանի հաստատություններում:

Գորիսի պետական համալսարանում նախարարը հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների աջակցության կամավորական աշխատանքներում ներգրավված ուսանողների հետ, որոնք շուրջ մեկ շաբաթ մեր հայրենակիցներին դիմավորում էին, լուծում ամենահրատապ խնդիրները:

Նախարարին ուղեկցել են Սյունիքի մարզպետի տեղակալ **Հայկ Հարությունյանը,** Գորիսի պետական համալսարանի ռեկտոր **Տիգրան Վանդունցը,** մարզպետարանի եւ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ուսանողներին եւ դասախոսական կազմին դժվարին օրերին ցուցաբերած սրտացավության եւ համախմբվածության համար:

***շարունակությունը՝ էջ 4***

## Գորիսեցիների հոգատարությունն ու աջակցությունը



Սյունիքի մարզի Գորիս համայնք կատարած այցի շրջանակում նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների դիմավորման եւ աջակցման աշխատանքներում ներգրավված դպրոցների ղեկավարներին, մանկավարժների ու աշակերտների հետ:

*«Անհատապես յուրաքանչյուրիդ սրտանց ու խորին շնորհակալություն եմ հայտնում այն անձնվեր, սրտացավ աշխատանքի համար, որ կատարել եք: Այս օրերին հեշտ չի եղել ոչ մեկիս համար, բայց գիտեմ, որ ձեզ համար առանձնակի բարդ է եղել, քանի որ բռնի տեղահանված մեր հայրենակիցներն իրենց ծանր հույզերը առաջինը սփոփել են ձեզնով: Շատերդ ժամանակ չեք ունեցել մտածելու սեփական զգացողությունների մասին, այլ առաջին հերթին զբաղվել եք հայրենիքը, տունն ու տեղը կորցրած մարդկանց օգնելով: Մեր հայրենակիցներն այստեղ են հասել տասը ամսվա շրջափակումից, սարսափներից ու զրկանքներից հետո եւ շատ կարեւոր էր, որ Հայաստանում առաջինը հանդիպել են գորիսեցիների հոգատարությանն ու աջակցությանը»,-* ասել է ԿԳՄՍ նախարարը:

***շարունակությունը՝ էջ 4***

Համակարգ

## Ի խնդիր մասնագիտական աջակցության



ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում (ՀՄԿ) հանդիպել է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (ՏՄԱԿ) տնօրենների եւ ՀՄԿ անձնակազմի հետ:

Հանդիպման առանցքային թեման Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաներին հանրակրթության մեջ ներգրավումն ու նրանց մասնագիտական աջակցության ապահովումն էր:

Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է այս առնչությամբ ի հայտ եկած խնդիրներին ու դրանց հաղթահարման համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությանը:

Քննարկման ընթացքում ՏՄԱԿ-ների տնօրենները ներկայացրել են մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման գործընթացի արդյունավետ կազմակերպման վերաբերյալ իրավիճակից բխող առաջարկություններ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ ՀՄԿ-ի կողմից նախատեսվող հանրակրթական դպրոցների մանկավարժների եւ հոգեբանների համար վերապատրաստումների կազմակերպմանը վերաբերող մի շարք հարցեր:



Կառավարության որոշումով

# Ուսուցչի դրույքային ծանրաբեռնվածությունը այսուհետ կլինի 18-20 դասաժամ՝ 22-ի փոխարեն

ՀՀ կառավարության որոշմամբ՝ վերանայվել է դպրոցների ուսուցիչների եւ արտադպրոցական հաստատությունների մանկավարժների աշխատաժամանակը:

Մինչ հարցի զեկուցումը ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** շնորհավորել է հանրապետության մանկավարժներին՝ Ուսուցչի օրվա առթիվ. *«Շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին եւ շնորհակալություն հայտնում իրենց աշխատանքի համար: Հատկապես այս օրերին դա պահանջում է լրացուցիչ ջանք՝ հաշվի առնելով, որ մեր երկրում են գտնվում նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 21 հազար դպրոցահասակ տարիքի երեխաներ, որոնց կրթության ապահովումը նույնպես մեր խնդիրն է»:*

Անցնելով հարցի զեկուցմանը՝ նախարարը նշել է, որ ՀՀ կառավարության ծրագրի եւ կրթության ռազմավարության կարեւորագույն թիրախ է հարակրթության ոլորտի բովանդակային բարեփոխումը, որը տեւական ժամանակ նախապատրաստվում եւ փորձարկվում էր: *«Սեպտեմբերից սկսել ենք հանրակրթության նոր չափորոշչի փուլային ներդրումը հանրապետության բոլոր դպրոցներում: Այն մի շարք նոր պահանջներ է առաջադրում ուսուցիչներին, որոնք կապված են գնահատման համակարգի փոփոխությունների, դասի պլանավորման եւ անցկացման որակական նոր պահանջների, կրթական մեթոդների բազմազանեցման, երկարօրյա հավելյալ դասընթացների կազմակերպման եւ մի շարք այլ նոր խնդիրների հետ»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը:

Ըստ այդմ, ըստ նախարարի, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ուսուցչի կողմից շաբաթական դասավանդվող ժամերի քանակը՝ նվազեցնելով այն եւ այդպիսով աշխատաժամանակ ազատելով ուսուցչի մյուս անելիքների համար, որոնք էական ազդեցություն ունեն կրթության որակի վրա: *«Ներկայում ուսուցչի շաբաթական մեկ դրույք ծանրաբեռնվածությունը կազմում է 22 դասաժամ, որը գործնականում թույլ չի տալիս լուծել նշված խնդիրները: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել, որ հանրակրթության նոր չափորոշչով տարրական դասարաններում միավորային գնահատման համակարգը չի գործում, եւ ուսուցիչները զգալի ժամանակ պետք է հատկացնեն ձեւավորող գնահատման մեթոդներով սովորողների հետ աշխատելու համար: Ըստ այդմ՝ նախագծով առաջարկվում է 1-4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար շաբաթական դասաժամերը սահմանել 1 դրույքի համար 18 ժամ, իսկ 5-12-րդ դասարաններում՝ 20 դասաժամ: Սա կհանգեցնի տարրական դասարանում դասավանդող ուսուցիչների 1 դրույքի վարձատրության 20 տոկոս, իսկ 5-12-րդ դասարաններում դասավանդողների՝ 10 տոկոս աճի»,-* նշել է նախարարը՝ ընդգծելով, որ փոփոխությունները կիրականացվեն հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանը զուգընթաց:



Ըստ այդմ՝ սեպտեմբերից նման ձեւաչափով կարգավորվում են 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների դասավանդման գործընթացները, մյուս ուսումնական տարվանից դրան կավելանան եւս 4 դասարաններ, իսկ հաջորդ տարում՝ մնացած դասարանները:

*«Նախագծի ընդունումը կնպաստի ոչ միայն ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանը, այլ նաեւ կրթության որակի բարելավմանը, քանի որ մանկավարժական տեսանկյունից շաբաթական դասավանդման ժամերը, ինչպես հիմնավորված է տեսությամբ եւ հետազոտություններով, պետք է չգերազանցի 20 ժամը»,-* փաստել է Ժաննա Անդրեասյանը:

Նախագծով կարգավորվում է նաեւ արտադպրոցական հաստատությունների մանկավարժների միասնական աշխատաժամանակի խնդիրը, որն իրականացվել է գործող իրավակարգավորումների վերլուծության եւ համայնքների ու հաստատությունների հետ մանրակրկիտ քննարկման արդյունքում՝ հաշվի առնելով, որ դրանց ճնշող մեծամասնությունը համայնքային ենթակայության են: Ըստ այդմ՝ առաջարկվում է արտադպրոցական հաստատություններում կիրառել շաբաթական 20 ժամ դասավանդման սկզբունքը: Այդ դրույթն ուժի մեջ կմտի 2026 թվականի սեպտեմբերի 1-ից՝ հաշվի առնելով, որ դրանից բխող ֆինանսական հետեւանքներ կան, եւ որոշակի ժամանակահատված է պետք, որ համայնքներն իրականացնեն անհրաժեշտ փոփոխությունները:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Բարի լուր

## Հերթական ոսկե մեդալը




Ինդոնեզիայում կայացել է կիրառական քիմիայի միջազգային օլիմպիադան, որին Հայաստանը մասնակցել է առաջին անգամ:

Մեր երկիրը ներկայացրել է *«Քվանտ»* վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ **Կամունի Աբրահամյանը:** Առկա ձեւաչափով անցկացված եզրափակիչ փուլում թեստային եւ հետազոտական աշխատանքների կատարման արդյունքում մեր մասնակիցն արժանացել է ոսկե մեդալի:

Օլիմպիադային մասնակցել է 9 երկրի 92 ներկայացուցիչ, որոնք ընտրվել էին երկու առցանց օլիմպիադաների անցկացման արդյունքում:

Աշխարհի հետ

# Հայ-ֆրանսիական մշակութային երկխոսություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կայացել է ֆրանսիացի գրող Ֆլորիան Զելլերի *«Որդին»* ներկայացման պրեմիերան:

Այս կապակցությամբ՝ *«Արմենպրես»* լրատվական գործակալությունում տեղի է ունեցել ասուլիս, որի բանախոսներն էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը,** Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն **Լուսինե Սահակյանը,** ռեժիսոր **Սաթէ Խաչատրյանը,** բեմանկարիչ **Բենժաման Լըբրըտոնը:**

ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը նշել է, որ ծրագիրն իրականացվում է հայ-ֆրանսիական միջպետական մշակութային համագործակցության շրջանակում. *«Այս համագործակցությամբ կիրականացվեն նաեւ այլ ծրագրեր, այդ թվում՝ Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված՝ «Նռան գույնը» պարային բեմադրությունը»:*

Փոխնախարարն առանձնակի կարեւորել է այսօրինակ ծրագրերում մարզերի ներգրավվածությունը, ինչը ԿԳՄՍ նախարարության մշակութային քաղաքականության առանցքում է. *«Հետեւելով մարզերում անցկացվող միջոցառումներին՝ կարող եմ ասել, որ այնտեղ նախանձախնդիր հանդիսատես կա, եւ ամեն ինչ պետք է արվի՝ աշխուժացնելու մարզերի մշակութային կյանքը»:*




Նախարարի տեղակալը նշել է, որ արվեստագետները պատրաստակամություն են հայտնել մշակութային միջոցառումներից ստացված հասույթները փոխանցելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների օժանդակության հիմնադրամներին, ինչը եւս մեկ ընդհանուր խնդրի շուրջ համախմբվածության ցուցիչ է:

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Լուսինե Սահակյանի տեղեկացմամբ՝ թատրոնում կայանալիք պրեմիերան իրականացվելու է միջմարզային համագործակցությամբ. ներկայացմանը կմասնակցեն ոչ միայն Վանաձորի, այլեւ Գորիսի թատրոնի դերասանները:

*«Որդին»* ներկայացման բեմադրիչ Սաթէ Խաչատրյանի խոսքով՝ ֆրանսիական դրամատուրգիան հարուստ ավանդույթներ ունի, եւ Ֆլորիան Զելլերի դրամատուրգիան Հայաստանում ներկայացնելը շատ կարեւոր է թե՛ գեղագիտական արժեքի, թե՛ դաստիարակչական բովանդակության, եւ թե հայ-ֆրանսիական համագործակցության համատեքստում: *«Ինչպես զինվորականներն են պատերազմի ժամանակ զբաղվում իրենց գործով, այնպես էլ արվեստագետներն իրենց մարտադաշտում պետք է զորակցեն նրանց՝ պայքարելու եւ զորացնելու հայրենիքը»,-* ասել է Սաթէ Խաչատրյանը:

Բեմանկարիչ Բենժաման Լըբրըտոնն էլ ներկայացումը որակել է՝ որպես մշակութային երկխոսության ձեւ՝ ֆրանսիական երկ եւ հայկական միջավայր:

# Ամփոփվել են մրցույթի արդյունքները

*սկիզբը՝ էջ 1*



Ողջունելով ուսուցչական համայնքի ներկայացուցիչներին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նախ շնորհավորել է նրանց մասնագիտական տոնի առթիվ՝ ընդգծելով, որ մեր երկիրը գտնվում է այնպիսի փուլում, երբ ուսուցիչն ամեն օր հավելյալ ջանք եւ հետեւողականություն պետք է ցուցաբերի իր աշխատանքում: *«Իհարկե, շատ դժվարին օրեր ենք ապրում, որն ուղղակիորեն անդրադառնում է նաեւ կրթական համակարգի վրա ու կրկնապատկում անելիքները, քանի որ այսօր առաջնային խնդիր ունենք աջակցելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր սովորողներին, ուսուցիչներին ու գործընկերներին: Անգնահատելի է այն աշխատանքը, որ դուք անում եք»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը՝ շնորհակալություն հայտնելով ուսուցիչներին ԼՂ-ից բռնի տեղահանվածների աջակցության եւ կամավորական աշխատանքի համար:

ԿԳՄՍ նախարարը վստահություն է հայտնել՝ դպրոցները պատվով են դուրս գալու այս դժվարին իրավիճակից.

*«Պատկերացնում եմ, թե այս օրերին որքան բարդ է մտնել դասարան, պատասխանել աշակերտների տարատեսակ հարցերին, խոսել այն թեմաներից, որոնց մասին խոսելու ձեւն ու մոտեցումը դեռ պետք է գտնենք եւ միաժամանակ ապահովել կրթություն այն երեխաների համար, որոնք անցել են սարսափելի փորձությունների միջով, տեսել եւ ապրել են իրավիճակներ, որոնք չպետք է տեսնեին: Միեւնույն ժամանակ պետք է աշխատել նրանց հետ ու տալ այն ջերմությունն ու հոգատարությունը, որը կօգնի մեղմել այս օրերի բոլոր սարսափները, պետք է դառնալ հյուրընկալ թիմ մեր բոլոր ուսուցիչների համար, որոնք այստեղ են ու պետք է տեղ գտնեն մեր դպրոցներում:*

*Կրթությունն այն համակարգն է, որը կարող է առաջ տանել պետությունը: Դպրոցի եւ ուսուցչի վրա դրված գործի պատասխանատվությունն այսօր ավելի քան մեծ է, եւ հենց դա է մեզ ուժ տալիս իրականացնելու եւ վերաիմաստավորելու այս կարեւոր աշխատանքը»,-* շեշտել է Ժաննա Անդրեասյանը:

Անդրադառնալով *«Տարվա լավագույններ»* մրցույթին՝ ԿԳՄՍ նախարարն ընդգծել է, որ մրցույթի հայտերի որակը շարունակաբար բարելավվում է եւ դրա հիմքում դրված նպատակները՝ կրթության համակարգում նորարարությունների, ստեղծագործ մտքի ու նախաձեռնողականության խթանումը, լիովին կյանքի են կոչվում:

*«Սա դառնում է մի մեխանիզմ, որի միջոցով կրթական համակարգում ստեղծվում է հնարավորություն այդ գաղափարները տեղ հասցնելու, զարգացնելու ու տարածելու համարե»,-* նշել է նա՝ շնորհակալություն հայտնելով նաեւ գնահատող հանձնաժողովին՝ սեղմ ժամկետներում իրականացրած ծավալուն եւ արդյունավետ աշխատանքի ու շարունակական համագործակցության համար:

Մանկավարժներին շնորհակալություն է հայտնել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Նա ոգեւորիչ է համարել հատկապես այն փաստը, որ հաղթողների մեջ էին նաեւ տղամարդ մանկավարժներ, որոնց ներկայությունը պետք է խրախուսվի ուսումնական հաստատություններում:

*«Շատ ուրախ եմ, որ մրցույթն ընդգրկում է լայն աշխարհագրություն, որ թեմաները բազմազան են, եւ մասնակցել են տարբեր հաստիքների ներկայացուցիչներ: Սա նշանակում է, որ կրթական համակարգի բոլոր օղակներում պատշաճ աշխատանք է իրականացվում»,-* ասել է Արաքսիա Սվաջյանը:

Նախարարի տեղակալը վստահություն է հայտնել, որ տարեցտարի ուսուցիչների ոգեւորությունը կմեծանա եւ մրցույթին դիմողների թիվը կավելանա:

Միջոցառման շրջանակում *«Տարվա լավագույններ 2023»* մրցույթի հաղթողները պարգեւատրվել են շնորհակալագրերով եւ դրամական մրցանակներով: Նրանց պարգեւատրել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Շնորհակալագրերի են արժանացել նաեւ գնահատող հանձնաժողովի անդամները:

Նշենք, որ *«Տարվա լավագույններ 2023»* մրցույթին սահմանված ժամկետում ներկայացվել է 202 հայտ:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում ներկայացվել է 160 հայտ, հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 18 հայտ, հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր անվանակարգում՝ 4 հայտ, նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 12 հայտ, նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն անվանակարգում՝ 5, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր անվանակարգում հայտ չի ներկայացվել:









## Մայր աթոռ

# Արցախցի դպրոցականների համար

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող **Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը** կազմակերպում է ընդունելություն **7-10 տարեկան** արցախցի տղաների եւ աղջիկների համար:

Հայոց մարդասիրական ճեմարանում ուսուցումն **անգլերենով** է, բացառությամբ՝ *«Հայոց լեզու եւ գրականություն», «Հայրենագիտություն», «Հայոց պատմություն»* եւ *«Հայ Եկեղեցու պատմություն»* առարկաների:

Հնդկաստանում պաշտոնապես գրանցված եւ **պետականորեն ճանաչված** հայկական դպրոցը Դելիի՝ հնդկական տասնամյա դպրոցական կրթության որակավորման խորհրդի անդամ է եւ աշակերտներին լավագույնս պատրաստում է **10-րդ դասարանի ավարտական քննություններին:** Ճեմարանի կրթական ծրագիրն ու չափորոշիչները համապատասխանեցված են Դելիի կրթական համակարգին:

Հայոց մարդասիրական ճեմարանում **ուսումն անվճար է:** Դպրոցը հոգում է նաեւ աշակերտների Հնդկաստան **ուղեւորության, կեցության, սննդի, հագուստի եւ բժշկական ծախսերը:**

Ճեմարան ընդունելության համար ծնողները պետք է իրենց զավակներից պահանջվող փաստաթղթերն անձամբ ներկայացնեն **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն:**

Մարդասիրական ճեմարանի 10-րդ դասարանը *«լավ»* կամ *«գերազանց»* գնահատականներով ավարտած հայ պատանիները կարող են իրենց ուսումը եւս **2 տարի** շարունակել **Կալկաթայի Լա Մարտինիեր անգլիական ավագ դպրոցում:** Վերոհիշյալ դպրոցում աշակերտների **ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի եւ բժշկական ծախսերն ամբողջապես հոգում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:**

Լա Մարտինիեր դպրոցի **11-րդ** եւ **12-րդ** դասարանները *«լավ»* կամ *«գերազանց»* գնահատականներով ավարտած հայ պատանիներին բացառիկ հնարավորություն կընձեռնվի իրենց ցանկությամբ եւ ընտրությամբ, ինչպես նաեւ ճեմարանի տեսչության համաձայնությամբ, **Հնդկաստանի որեւէ բարձրագույն ուսումնական հաստատությունում** շարունակելու կրթությունը, ինչպես **բակալավրիատում,** այնպես եւ **մագիստրատուրայում:** Ուսման ողջ ընթացքում հայ ուսանողներին կտրվի **կրթաթոշակ,** բացի դրանից՝ **ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի եւ բժշկության ծախսերն ամբողջությամբ կհոգա Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:**

**Ընդունելության համար պահանջվում են հետեւյալ փաստաթղթերը.**

*- Անձնագիր,*

*- Մկրտության վկայական,*

*- Լուսանկար՝ 4 հատ (5 սմ x 5 սմ), լուսանկարի թվային տարբերակը հարկավոր է ուղարկել mayratorqdk@gmail.com էլ. հասցեին՝ նշելով անունը եւ ազգանունը:*

Հավելյալ տեղեկությունների համար պետք է զանգահարել **(010) 51-72-83** հեռախոսահամարով: Դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00:**

Հասցեն՝ ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Քրիստոնեական դաստիարակության կենտրոն:

Էլեկտրոնային հասցեն՝ **mayratorqdk@gmail.com, contact@armeniancoll-ege.edu.in:**

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի մասին հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել **https://www.facebook.com/Armenian College And Philanthripic Academy** ֆեյսբուքյան էջը:

# Կամավորական օրինակելի աշխատանքներ

*սկիզբը՝ էջ 1*

*«Այս ծանր օրերի ձեր կատարած աշխատանքը անգնահատելի է: Մեր հազարավոր հայրենակիցներ, անցնելով սարսափելի դժվարությունների միջով, շատ երկար ճանապարհից հետո այստեղ տեսել են ձեր հոգատարությունը, ջերմությունը: Դուք ստեղծել եք մի մթնոլորտ, որ նրանք հասկանան՝ հայրենիքում են, սիրված են, հարազատ են: Այդ ջերմ մթնոլորտն ու միջավայրը ավելին էին, քան ձեր կատարած կոնկրետ գործողությունները, որոնք ուղենշային կարեւորություն ունեցան»,-* ասել է նախարարը՝ ընդգծելով, որ աջակցության առաջին աշխատանքները հենց Գորիսում են կազմակերպվել:

Նրա խոսքով՝ Գորիսի ուսանողների եւ դպրոցականների կատարած կամավորական աշխատանքներն օրինակ են դարձել մյուս համայնքների եւ բնակավայրերի համար. *«Դուք ձեր վարքով ցույց տվեցիք ճանապարհը, թե ինչպես պետք է կազմակերպել այդ անչափ կարեւոր աշխատանքը: Սա վկայում է այն մասին, որ ամենակարեւորներն այս կյանքում արդեն սովորել եք եւ կարող եք սովորեցնել: Ակնհայտ է՝ ձեր կյանքում արժեքներն ու մոտեցումները ճիշտ են ընտրված, եւ վստահ եմ՝ այս օրերին շատ բան եք վերաիմաստավորել ինքներդ ձեզ համար: Դուք պատվով եք անցնում մեր պետության եւ ժողովրդի համար այս ճակատագրական ժամանակահատվածը, որը նաեւ կերտում է մարդուն: Այս օրերը ուղղորդիչ են լինելու ձեր արժեհամակարգի եւ ընդհանրապես հետագա ողջ կյանքի համար»,-* ուսանողների հետ հանդիպման ժամանակ նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը նաեւ վստահություն է հայտնել, որ առաջիկայում Գորիսի պետական համալսարանի ուսանողների շարքերը համալրող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայրենակիցներին եւս ընդունելու են նույնչափ ջերմությամբ եւ հարազատաբար: Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ մշակվում է ուսանողների աջակցության ծրագիր, որով նախատեսվում է լուծում տալ արցախցի ուսանողների խնդիրներին: ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ որակյալ կրթության դերը պետության ուժեղացման եւ կայացման, խնդիրների հաղթահարման գործում՝ կոչ անելով ուսանողներին լավ սովորել եւ դառնալ արհեստավարժ մասնագետներ, որոնց կարիքն ունի պետությունը:

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցի խոսքով՝ համալսարանի շուրջ 60 ուսանողներ սեպտեմբերի 24-ից սկսած ներգրավվել են ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցների դիմավորման ու աջակցման աշխատանքներում:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հետ հանդիպման ընթացքում ուսանողները մանրամասներ են ներկայացրել իրենց կատարած աշխատանքների ու ունեցած դժվարությունների մասին: Պատմել են, թե այդ օրերին ինչպես էին թե՝ մեծերը, թե՝ փոքրերը գիշեր ու ցերեկ հերթափոխով մասնակցում տարատեսակ աշխատանքների: Նրանց որոշ մասն իրականացրել է ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիների հաշվառումը, մյուսները՝ հայկական Կարմիր խաչի հետ համատեղ զբաղվել են մեր հայրենակիցների առաջնային կարիքների գնահատմամբ, նրանց ապահովել անհրաժեշտ սնունդով, հագուստով, զբաղվել նրանց գիշերակացի ու առաջնային այլ հարցերի կազմակերպմամբ:

*«Միշտ ենք մեկ ընտանիքի պես եղել, բայց այս ծանր իրավիճակը միասին հաղթահարելուց հետո այս ընտանիքում հիմա ավելի շատ սեր ու ջերմություն կա: Տեսել ենք շատ բարդ ու ծանր երեւույթներ: Ուսանողներ ունեինք, որ ցերեկը զբաղվում էին մեր հայրենակիցների հաշվառմամբ, իսկ գիշերը գալիս սնունդի կամ այլ հարցերով էին օգնում: Դպրոցահասակ երեխաներին չէինք կարողանում համոզել, որ գոնե երեկոյան տուն գնան. բոլորը մեկ մարդու պես, շատ համակարգված լծվել էին մեկ գործի՝ օգնելու Լեռնային Ղարաբաղից բռնի հեռացող մեր հայրենակիցներին»,-* նշել են ուսանողները:

Հանդիպման ընթացքում նախարարը կարեւորել է նաեւ կամավորների արագ կողմնորոշվելու եւ դժվարին իրավիճակը քաոսի չվերածելու կարողությունը՝ այս համատեքստում ընդգծելով մարզային ու քաղաքային իշխանությունների համակարգված ու միասնական աշխատանքը: *«Մեր մյուս բուհերն էլ ունեին ցանկություն ու պատրաստակամություն աջակցության աշխատանքներին միանալու, բայց դուք եղաք առաջինն ու օրինակ ծառայեցիք կրթական համակարգի մեր մյուս օղակներին: Հիմա արդեն բոլորիս անելիքը պետք է լինի մեր հայրենակիցների համար ապրելու արժանապատիվ հնարավորություններ ապահովելը՝ թե՛ կրթության, թե՛ աշխատանքի ապահովման առումով»,-* ընդգծել է նախարարը:

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը նաեւ տեղեկացրել է՝ ԼՂ-ից բռնի տեղահանված մի քանի ուսանողներ արդեն իսկ դիմել են բուհ՝ կրթությունը շարունակելու հարցով՝ բակալավրի եւ մագիստրոսական կրթական ծրագրերով:

Այցի շրջանակում նախարարը եղել է նաեւ Գորիսի դրամատիկական թատրոնում, ավագ եւ հիմնական դպրոցներում:





# Գորիսեցիների հոգատարությունն ու աջակցությունը

*սկիզբը՝ էջ 1*

Ընդգծելով, որ այդ օրերին Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը վերածվել էր տեղահանվածների ընդունման կայանի՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է մեծածավալ աշխատանքը, որ այդ օրերին արվել է տեղի կրթական եւ մշակութային համակարգի ներուժով. *«Գիտեմ, որ դպրոցների գրեթե բոլոր աշակերտները, ուսուցիչները, տնօրեններն ու մյուս աշխատողները ներգրավված են եղել կամավորական աշխատանքներում: Ունենք դպրոց, որտեղ ապահովվել է մեր հայրենակիցների գիշերակացը, մեկ այլ դպրոց ծառայում էր որպես պահեստ: Այս օրերին մենք տեսել ենք, թե ինչպես է կրթական համակարգը պետության համար հավելյալ խնդիրներ լուծում, որը շատ կարեւոր է որպես փաստ եւ արժանի է մեծ գնահատանքի: Բոլորդ առանձին-առանձին շատ մեծ աշխատանք եք կատարել, ինչի համար շնորհակալ եմ թե՛ ձեզ, թե՛ ձեր ընտանիքներին եւ թե կրթական հաստատություններին»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ աշխատանքները դեռ ավարտված չեն:

Նախարարի խոսքով՝ ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից շատերն արդեն հաստատվել են Սյունիքի մարզում եւ առաջիկայում մեծ աշխատանքներ պետք է տարվեն՝ երեխաներին պարտադիր կրթության մեջ ընդգրկելու ուղղությամբ. *«Շատ մեծ գործ եք արել ու շարունակելու եք անել՝ երեխաների ինտեգրումը սահուն կազմակերպելու, ջերմություն ու հոգատարություն տալու առումով: Ցավոք, մեր դժվար օրերը չեն անցել, բայց դուք այս օրերին ցույց տվեցիք, որ մենք որպես մեկ միասնական թիմ, մեկ միասնական հասարակություն ու պետություն կարողանում ենք դիմակայել այսպիսի ճգնաժամային իրավիճակներին»:*

Ժաննա Անդրեասյանը հույս է հայտնել, որ հաջորդիվ Գորիսի պետական դրամատիկական թատրոն այցելելու առիթը միայն պրեմիերաների ու ներկայացումների դիտումները կլինեն:

ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել նաեւ թատրոնի ողջ անձնակազմին՝ աջակցման աշխատանքներում իրենց մեծ ներդրումն ունենալու համար:

Այցի շրջանակում նախարար Ժաննա Անդրեասյանը եղել է նաեւ Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ եւ Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցներում: ԿԳՄՍ նախարարը հանդիպել է նշված դպրոցներ հաճախող ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտներին, զրուցել նրանց հետ: Նախարարը հույս է հայտնել, որ սրտացավ մանկավարժների ու սովորողների շնորհիվ երեխաներն արագ կինտեգրվեն նոր միջավայրին, ձեռք կբերեն ընկերներ: Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ եւ թիվ 2 հիմնական դպրոցներում այս պահի դրությամբ, ընդհանուր առմամբ, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 50 աշակերտ է ընդգրկվել: Նրանք բոլորն էլ ստացել են անվճար դասագրքեր, գրենական պիտույքներ:







Գրադարանավարի օրվա առթիվ

# Ի շահ գրադարանային գործի

Գրադարանավարի օրվա առթիվ՝ գրադարանային ոլորտում ունեցած նշանակալի ավանդի եւ երկարամյա աշխատանքային գործունեության համար ոլորտի մի շարք պետական եւ համայնքային կազմակերպությունների աշխատակիցներ պարգեւատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության շնորհակալագրով եւ պատվոգրով: Պարգեւները հանձնել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանը:**





Ողջունելով ներկաներին՝ Ալֆրեդ Քոչարյանը նախարարության անունից մեկ անգամ եւս շնորհավորել է ոլորտի աշխատակիցներին մասնագիտական օրվա առթիվ եւ կարեւորել գրադարանների եւ գրադարանավարների անգնահատելի դերակատարումը հանրության կյանքում:

Նախարարի տեղակալը խոսել է նաեւ ոլորտում առկա մարտահրավերների մասին՝ մատնանշելով արդի տեխնոլոգիաների ներդրման, նորարարական մոտեցումների անհրաժեշտությունը: Նա վստահություն է հայտնել, որ ոլորտի ներկայացուցիչները հմտությունների զարգացման եւ բարձր մասնագիտական կարողությունների շնորհիվ հաղթահարում են նաեւ այդ խնդիրները:

Ալֆրեդ Քոչարյանի ընդգծմամբ՝ պետությունը անչափ կարեւորում է գրադարանային ոլորտի առաջխաղացումը եւ դրա լավարկման նպատակով պետական բյուջեից 30 մլն դրամ է հատկացվել գրադարանների սերվերների ձեռքբերման համար, որոնց միջոցով կապահովվեն գրադարանների անվտանգ եւ սահուն աշխատանքները:

Նախարարի տեղակալը մաղթել է ոլորտի մասնագետներին կենսական մեծ ուժ եւ հաջողություններ:

Գրախոսություն

# Փարավոն Միրզոյանի դիմանկարի աշխարհում…

Ժամանակակից հայ գեղանկարչության ամենաինքնատիպ դեմքերից է **Փարավոն Միրզոյանը,** ում ստեղծագործությունը լայն ընդունելություն է գտել ոչ միայն Հայաստանում, այլեւ օտարերկրացիների եւ օտարազգիների միջավայրում եւ շրջապատում…

Հայաստանի ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանն անցել է ուսումնառության եւ ստեղծագործական ակտիվ գործունեության արգասաբեր ուղի: Ծնվել է Սյունյաց աշխարհում՝ 1949թ. դեկտեմբերի 2-ին՝ Սիսիանի շրջանի Սալվարդ գյուղում: Բարձրագույն կրթությունն ստացել է Խորհրդային Միության կրթամշակութային նշանավոր կենտրոն հանդիսացող Լենինգրադ քաղաքում:

1969-75 թվականներին ուսումնառել է Լենինգրադի Ի.Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում: Իսկ մինչ այդ՝ 1968-69թթ., ուսումնառել է նույն քաղաքի Ալ.Գերցենի անվան պետական մանկավարժական ինստիտուտում:




1976թ. ընդունվել է ԽՍՀՄ նկարիչների միության շարքերը: Երկար ժամանակ՝ 1989-ից, զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ. ղեկավարել է Երեւանի գեղարվեստաթատերական պետական ինստիտուտի (հետագայում՝ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա, ներկայումս՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) եւ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղանկարչության ամբիոնները: 1995թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա կյանքի եւ գործունեության կարեւոր մի փուլը կապված է Հայաստանի ազգային պատկերասրահի հետ, որի տնօրենն է եղել 2002-2014 թվականներին:

Փարավոն Միրզոյանի ստեղծագործական աշխատանքներն ու գործունեությունը բարձր է գնահատվել նաեւ հայրենի երկրի սահմաններից դուրս: Այսպես, 2006 թվականին վաստակաշատ գեղանկարիչն ընտրվել է Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստի եւ գիտությունների Պետրովյան ակադեմիայի իսկական անդամ:

2008թ. նրան շնորհվել է Ֆրանսիայի *«Արվեստի եւ գրականության ասպետ«* կոչումը, իսկ 2015թ. ընտրվել է Ռուսաստանի Դաշնության գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ:

Պետք է նշել, որ մեծավաստակ արվեստագետն արժանացել է բազմաթիվ պարգեւների, որոնցից հատկապես կարեւորվում է ՀՀ պետական մրցանակը (2007թ.):

Փարավոն Միրզոյանն այս ընթացքում ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ ոչ միայն Երեւանում եւ Հայաստանի այլ քաղաքներում, այլեւ Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Սերբիայում, Լեհաստանում, Լիբանանում, Բելառուսում:

Նրա գեղարվեստական գործերը ներկայացված են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի թանգարաններում, ինչպես նաեւ մի շարք երկրների (այդ թվում՝ ԱՄՆ-ի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Լիտվայի, Բելառուսի. Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի եւ Հնդկաստանի) մասնավոր հավաքածուներում:

Վերջերս ընթերցողի գրասեղանին դրվեց եւս մեկ բացառիկ գործ՝ *«Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում»* շքեղազարդ հատորը: Այն հրատարակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի եւ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության որոշումներով: Սույն նախագծի գիտական ղեկավարն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանը, իսկ գիտական խմբագիրը՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը:

Որպես վերջաբան՝ գրված ծավալուն խոսքում (*«Դիմանկարը Փարավոն Միրզոյանի արվեստում»*) արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար Մարգարիտա Քամալյանը նրբին վարպետությամբ մեկնաբանում է վաստակաշատ արվեստագետի դիմանկարների համախումբը՝ ընդգծելով, որ տասնամյակների ընթացքում՝ հասունացման եւ պրպտումների ծիրում նկարչի ձեռագիրն ունեցել է զարգացման որոշակի փոփոխություններ: Ի մասնավորի, նշված է, որ Փարավոն Միրզոյանի հասուն շրջանի ստեղծագործության հիմքը մոդեռնիստական ուղղությունների ավանդույթների եւ անհատական ու ներըմբռնողական ընկալման հանրագումարն է:

Սքանչելի ձեւավորումով սույն պատկերագիրքը հուզական հզոր լիցքեր ունի: Փարավոն Միրզոյանի դիմանկարների աշխարհում մեր ժողովրդի մեծագույն անհատներն են, գրի եւ գրչի անմահանուն այրեր Եղիշե Չարենցը, Համո Սահյանը, մեծանուն արվեստագետ Տիգրան Մանսուրյանը, դերասան Վլադիմիր Մսրյանը, բանաստեղծներ Լյուդվիգ Դուրյանը, Բաբկեն Սիմոնյանը, նկարիչ Զաքար Խաչատրյանը, գրող Սամվել Խալաթյանը, դերասան Կարեն Ջանիբեկյանը, Դանիել Երաժիշտը եւ ուրիշներ:

Այս շարքում կանգ առնենք *«Խոհեր: Աննա Ասատրյանի դիմանկարը»* տպավորիչ գործի կողքին: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանի դիմանկարն աչքի է ընկնում հոգեկան խորին դրամատիզմով, ոգու եւ մտքի վեհ սլացքով, ներքին հանդիսավորությամբ: Արվեստագետուհու հայացքը խորաթափանց է ու նպատակասլաց՝ մեզ շատ բան հուշող եւ թելադրող: Դիմանկարն ստեղծվել է 2021 թվականին (կտավ, յուղաներկ, 130x100):

Դիմանկարների շարքում հայուհիների բազմաթիվ թրթռուն կերպարներ կան, որոնք գեղագիտական հաճույք են փոխանցում ընթերցող հանդիսականին:

Ф.Միրզոյանի վրձինը վարպետորեն կերտել է ինքնադիմանկարների շարքը, ինչպես նաեւ ընտանիքին վերաբերող գործեր (*«Իմ դուստրերը», «Իմ ընտանիքը», «Հայր եւ որդի»* եւ այլն):



***«Խոհեր: Աննա Ասատրյանի դիմանկարը»***

Արվեստասեր հանրության համար հայտնություն դարձան Փարավոն Միրզոյանի կերտած դիմաքանդակները, որոնցով նա լուրջ հայտ ներկայացրեց՝ որպես տաղանդավոր քանդակագործ:

Պատկերագրքում ներկայացված ստեղծագործություններից յուրաքանչյուրը գեղագիտական չափանիշներով արվեստի բարձր գործ է: Այստեղ դրսեւորվող մոտիվներն ու մոտիվացիան չեն նույնանում եւ չեն կրկնում միմյանց:

Շատ կարելի է գրել եւ նորանոր գեղեցկություններ հայտնաբերել սույն հրաշագեղ ալբոմում:

Բայց, որպես խտացում եւ ամփոփում ասվածի եւ չասվածի, պիտի ընդգծենք, որ մեր օրերի տաղանդաշատ գեղանկարիչը դիմանկարների այս հատորյակով է՛լ ավելի բարձրացնում եւ ամրապնդում է իր կշիռն ու ներկայությունը, հարգն ու հեղինակությունը հայ եւ օտարազգի ստեղծագործող անհատների առաջին շարքերում:

Իսկ եռալեզու պատկերագիրքն իսկական գանձ կլինի ցանկացած ճաշակավոր արվեստագետի գրադարանում…

***ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***պատմական գիտությունների թեկնածու***

Ի գիտություն

# Նոր կարգավորումներ՝ բռնի տեղահանված ուսանողների կրթության վերաբերյալ



Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների կրթության կազմակերպման նպատակով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հերթական շրջաբերական գրությունն է ուղարկել ուսումնարանների եւ քոլեջների տնօրեններին:

Համաձայն շրջաբերականի՝ ԿԳՄՍ նախարարությունն այս ընթացքում ստացել է մի շարք հարցեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության շարունակության կազմակերպման դեպքում իրենց ուսումնառած եւ նախընտրած մասնագիտություններով առարկայական 8 տարբերությունների գերազանցման, ինչպես նաեւ ավագ դպրոց հաճախող կամ հիմնական կրթությունից հետո կրթությունից դուրս մնացած անձանց արհեստագործական ուսումնարան կամ քոլեջ ընդունվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախարարությունը ՄԿՈՒ հաստատություններին տնօրեններին տեղեկացրել է, որ անձի ուսումնառած եւ նախընտրած մասնագիտություններով 8 առարկայական տարբերությունների գերազանցման դեպքում անհրաժեշտ է նախարարության համաձայնությունը ստանալուց հետո հրամանագրել ուսումնառած կուրսից՝ հնարավորության դեպքում կազմակերպելով առարկայական տարբերությունների հանձնումը, կամ անձի (անչափահաս լինելու դեպքում ծնողի) համաձայնությամբ վերականգնել այն կուրսից, որտեղ չի գերազանցի 8 առարկան (մոդուլը): Անձի կողմից հարակից մասնագիտությամբ ուսումը շարունակելու եւ նրա մոտ ակադեմիական տեղեկանք կամ ուսումնառության վերաբերյալ տեղեկատվություն չլինելու դեպքում առարկայական տարբերությունները պետք է հաշվել ՀՀ-ում գործող համապատասխան մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ուսումնական պլաններով:

Ավագ դպրոց հաճախած կամ հիմնական կրթությունից հետո կրթությունից դուրս մնացած անձանց թույլատրվում է կրթությունը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ վճարովի համակարգում, սակայն այդ դեպքում պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում հետագայում չի նախատեսվում:

Հիշեցնենք, որ քոլեջների եւ ուսումնարանների ղեկավարներին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների կրթության կազմակերպման նպատակով նախարարությունը շրջաբերական գրություն էր ուղարկել նաեւ նախորդ շաբաթ: Ըստ այդմ՝ հանձնարարվել էր բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության շարունակությունը կազմակերպել ՀՀ-ում ուսանողի բնակության վայրի ամենամոտ (համայնք կամ մարզ) ուսումնական հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ՝ տվյալ մասնագիտության համար լիցենզիայով հատկացված տեղերի թիվը չգերազանցելու պայմանով: Լիցենզիայով հատկացված տեղերի թիվը գերազանցելու դեպքում՝ ուսումնական հաստատության կողմից պետք է խորհուրդ տրվի համայնքի կամ մարզի այլ հաստատություն, որտեղ առկա է ուսանողի ուսումնառած մասնագիտությամբ թափուր տեղ: Ուսանողի բնակության վայրի ամենամոտ ուսումնական հաստատությունում լիցենզիայով հատկացված տեղերը գերազանցելու դեպքում ուսանողն իր ցանկությամբ կարող է դիմել հարակից մասնագիտությամբ՝ պահպանելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարի՝ 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանի հավելվածով հաստատված *«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման»* կարգի պահանջները:

Ուսանողական իրավունքի վերականգնման մերժման հիմք չի կարող հանդիսանալ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը: Ուսանողի դիմումն ընդունելուց հետո անհրաժեշտ է նրան թույլատրել մասնակցելու ուսումնական գործընթացին եւ հնարավորինս սեղմ ժամկետում դիմել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ վերականգնման համաձայնություն ստանալու համար:

ԼՂ-ում ընդհատված կրթության իրավունքի վերականգնման դեպքում պետական քոլեջներում եւ ուսումնարաններում կրթության կազմակերպման նպատակով նախատեսվում է պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչություն՝ հետեւյալ հեռախոսահամարով՝ (+374) 10-599-623:

Տեսակետ

# Զարգացման ռազմավարական ծրագրի կարեւորությունը

***Հաջողության հասնելու համար ինքդ քեզ պետք է չորս հարց տաս՝ ինչո՞ւ, ինչո՞ւ ոչ, ինչո ՞ւ ոչ ես, ինչո՞ւ ոչ հիմա: (Ջիմի Դին)***

Դպրոցի զարգացման ռազմավարական ծրագիրը կարեւոր փաստաթուղթ է հանրակրթական ուսումնական հաստատության համար, որը ներառում է դպրոցի բարելավումն ու ընդհանուր զարգացումը: Հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը հաստատության բարելավման եւ աճի ռազմավարական ուրվագիծն է հինգ տարիների համար:

Դպրոցի զարգացման ծրագրի մշակման հիմնական նպատակներն են՝

*- Սովորողների կրթական արդյունքների բարելավում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցման եւ ուսումնառության գործընթացների բարելավում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներառականության եւ հավասարության խթանում,*

*- Արդիական մարտահրավերներին համապատասխան համապիտանի ուսումնական պլանի մշակում,*

*- Անձնակազմի եւ սովորողների համար անխռով, աջակցող միջավայրի ապահովում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության մեջ ծնողների եւ համայնքի ներգրավվածության ապահովում,*

*- Ռեսուրսների արդյունավետ կառավարում եւ բաշխում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության գնահատում եւ տվյալների վրա հիմնված որոշումների կայացում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության անձնակազմի (այդ թվում՝ մանակավարժական աշխատողների) մասնագիտական զարգացում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական եւ վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման գործընթացներում տեխնոլոգիաների ներդրում,*

*- Համայնքի իրազեկում եւ համագործակցություն,*

*- Բնապահպանական կայունություն նախագծում,*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության երկարաժամկետ ռազմավարական պլանավորում (հինգ տարիների համար),*

*- Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության գնահատման, հաշվետվողականության եւ թափանցիկության ապահովում:*

Վերոնշյալ նպատակներն ուղղորդում են դպրոցի ներդրումները կրթության շարունակական բարելավման եւ գերազանցության ուղղությամբ՝ նպաստավոր ուսումնական միջավայր ստեղծելով ինչպես սովորողների, այնպես էլ անձնակազմի համար:

Հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը ներառում է դպրոցի շարունակական զարգացմանն ուղղված հետեւյալ ուղղությունները.

*- Տեսլական եւ նպատակներ. դպրոցի զարգացման ծրագիրը ուրվագծում է դպրոցի ապագայի տեսլականը եւ սահմանում հստակ, հասանելի նպատակներ, որը կօգնի բոլոր շահառուներին աշխատանքները կազմակերպել համընդհանուր նպատակի ուղղությամբ:*

*- Շարունակական բարելավում. դպրոցի զարգացման ծրագիրը ապահովում է կառուցողական մոտեցում՝ բացահայտելու այն ոլորտները, որոնք բարելավման կարիք ունեն:*

*- Ռեսուրսների կառավարում. դպրոցի զարգացման ծրագիրը հնարավոր է դարձնում արդյունավետորեն բաշխել առկա կամ համալրվող ռեսուրսները:*

*- Հաշվետվողականություն եւ գնահատում. դպրոցի զարգացման ծրագրում ներկայացված են գնահատման չափանիշներ դպրոցի առաջընթացը գնահատելու եւ կատարված աշխատանքների արդյունավետությունը հրապարակելու նպատակով:*

*- Նպատակային կրթական ծառայությունների մատուցում. դպրոցի զարգացման ծրագրում ներառված են սովորողների կրթական կարիքների հիման վրա նպատակային, սովորողակենտրոն, անհատական ուսուցման ռազմավարություններ:*

*- Փոփոխությունների կառավարում. դպրոցի զարգացման ծրագիրը հնարավորություն է ընձեռում դպրոցին հինգ տարիների ընթացքում նախատեսվող փոփոխությունների կառավարումը՝ արդիական պահանջներին, տեխնոլոգիաներին եւ լավագույն փորձին համապատասխան:*

*- Շահառուների ներգրավվածություն. դպրոցի զարգացման ծրագրում կարեւորվում են հաստատությունում հանրակրթական պետական ծրագրերի իրականացման գործընթացում ներգրավված շահառուների ներդրումն ու արդյունավետ համագործակցությունը:*

*- Դպրոցի բարելավման չափանիշներ. դպրոցի զարգացման ծրագրում ներկայացված բարելավման չափանիշները բխում են ՀՀ օրենսդրության պահանջներից, հաստատության հնարավորություններից, համայնքի առանձնահատկություններից եւ շահառուների կարիքներից:*

*- Երկարաժամկետ կայունություն. դպրոցի զարգացման ծրագրում սահմանված նպատակները եւ դրանց հասնելու ռազմավարությունները կապահովեն՝ դպրոցի զարգացման երկարաժամկետ կայունությանը եւ հաջողությանը:*

Հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը մշակվում է՝ ելնելով տվյալ համայնքի առանձնահատկություններից, տվյալ հաստատության սովորողների կարիքներից, առաջնահերթություններից եւ մարտահրավերներից:

***Արուսյակ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Մաթեմատիկա»* (180 ժամ), *«Ֆիզիկա»* (542 ժամ), *«Զինվորական ղեկավար»* (728 ժամ) առարկաների եւ *«Տնտեսագիտություն»* (552 ժամ), *«Վիճակագրություն»* (126 ժամ), *«Իրավունքի հիմունքներ»* (36 ժամ) ուսումնական մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Նշված առարկաները կարող է դասավանդել այն անձը, ով ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ):

Նշված մասնագիտական ուսումնական մոդուլները կարող է դասավանդել այն անձը, ով ստացել է դասընթացի բնույթին համապատասխանող միջին մամասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

*1) դիմում (Ձեւ 1),*

*2) կրթության մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

*5) ինքնակենսագրություն (Ձեւ 4)*

*6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.*

*8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ (բնօրինակը եւ պատճենը),*

*9) Գիտական աստիճանը, գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*10) Ըստ պաշտոնի հավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:*

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թ. հոկտեմբերի 11-ից մինչեւ հոկտեմբերի 24-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ը (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից),*** Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ուսանողական 5:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 30-ին՝ ժամը 11:00-ին,** Կոտայքի մարզի Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 32-35-45, (077) 15-88-27 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Ֆիզկուլտուրա», «Ինֆորմատիկա եւ ՏՀՏ»* առարկաների դասախոսի թափուր տեղերի համար*:*

Դասախոսի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներն են՝ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝՝**

*1) դիմում (Ձեւ 1),*

*2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

*5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*7) այլ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,*

*8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը), պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ*

*9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):*

Փաստաթղթերն ընդունվում են ***2023թ. հոկտեմբերի 12-ից հոկտեմբերի 25-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ը (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից),*** Գյումրու պետական տեխնիկական քոլեջում՝ հասցեն՝ ք.Գյումրի, Տիգրան Մեծ 29:

Մրցույթն անցակցվելու է ***2023թ. նոյեմբերի 2-ին՝ ժամը 12:00-ին եւ 14:00-ին,*** Գյումրու պետական տեխնիկական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0312) 5-19-00 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Միսաք Մանուշյանի անվան հ. 48 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

